ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 135

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 17-ը դեկտեմբերի 2020 թվականի թիվ 18 նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 17.12.2020 թվականի թիվ 18 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. 2021 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2021 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

4. 2021 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2021 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. Արենի համայնքի Ելփին բնակավայրի 21-րդ փողոց թիվ 2 հասցեում գտնվող 0.10991հա բնակավայրերի նշանակության հողամասը և հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը Եղիշ Մնացականյանին գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով օտարելուն համաձայնություն տալու մասին:

7. ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային նախնական հայտերին համաձայնություն տալու մասին:

8. 2021 թվականի ընթացքում Արենի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին վառելիք հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

9. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Բելոռուս մակնիշի տրակտորները «Արենի» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելուն համաձայնություն տալու մասին:

10. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում ներառված «Բեզոար» բնապահպանական հիմնադրամի կողմից նախատեսված և համայնքի բյուջե չվճարած վարձավճարների մասին:

11. Արենի համայնքի Չիվա բնակավայրի բնակիչ Խաչիկ Թադևոսյանի դիմումը քննարկելու և 0.07191 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին:

12. Արենի համայնքի Արփի բնակավայրի բնակիչ Արա Ռոբերտի Ասատրյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.0563հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

13. Արենի համայնքի ավագանու 02.11.2020 թվականի թիվ 128 որոշումը անվավեր ճանաչելու մասին:

14. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

15. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ